ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Լալա Մնացականյանն ընդդեմ «Հրապարակ» կայքի» գործով

Ա. ՓԱՍՏԵՐ

1. Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը 2023-ի հունիսի 2-ին ստացել է Լալա Մնացականյանի բողոքն ընդդեմ «Հրապարակ» կայքի՝ «2018-ի ակտիվությունս բերեց նրան, որ ես հասկացա, որ ոչինչ չեմ հասկացել» վերնագրով հրապարակման:

2. Ըստ Լալա Մնացականյանի՝ իրեն զանգահարել է «Հրապարակ» կայքի լրագրող Հայկ Գևորգյանը, իրենք ուղղակի զրուցել են, քանի որ ինքն ի սկզբանե հայտնել է, որ հարցազրույց չի տալու: Լալա Մնացականյանը զրույցի ընթացքում և զրույցից հետո լրագրողին մի քանի անգամ խնդրել է իրենց զրույցը չհրապարակել, քանի որ չի ցանկացել հարցազրույց տալ: Սակայն լրագրողն այդ զրույցը կայքում հրապարակվել է հարցազրույցի ժանրին բնորոշ որոշակի ատրիբուտներով:

3. Լալա Մնացականյանը մայիսի 25-ին էլեկտրոնային նամակով դիմում է ուղարկել «Հրապարակի» խմբագրություն՝ խնդրելով կայքից հեռացնել նյութը և հրապարակել իր հայտարարությունը, որ ինքն իրականում հարցազրույց չի տվել:

4. «Հրապարակի» խմբագրությունը պատասխան էլ.նամակում Լալա Մնացականյանին հայտնել է. *«Եթե լրագրողը զանգահարում է որևէ անձի, ներկայանում որպես լրագրող՝ տվյալ լրատվամիջոցից, և հարցեր է տալիս, դա արդեն հարցազրույց է: Լրագրողը Լալա Մնացականյանի ընկերը չէ, որ զանգի և զրուցի, հոգեբանը չէ, որ լսի նրան, մխիթարի, գործընկերը չէ, որ քաղաքական կամ մասնագիտական թեմաներով նրա հետ բամբասի… Հարցազրույց տալու ցանկություն չունեցող անձը չի զրուցում լրագրողի հետ, չի պատասխանում նրա զանգերին»:*

5. Հրապարակման տակ հայտնված արձագանքների կապակցությամբ «Հրապարակ» կայքի խմբագրությունը հայտնել է. *«Այդ մեկնաբանությունները մեր տնօրինությունից դուրս են, և դրանց վրա կենտրոնանալու դեպքում առհասարակ որևէ*

նյութ չպետք է հրապարակվի ոչ սոցցանցերում, ոչ լրատվամիջոցներում»:

6. Հրապարակված նյութի տակ ընթերցողների մի քանի արձագանքներից մեկում կա հայհոյախոսություն Լալա Մնացականյանի հասցեին:

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ
ՀՀ լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր

2.6. Հարգել հարցազրույց տվողի՝ որպես հարցազրույցի տեքստի նկատմամբ համահեղինակի, իրավունքները:
3.5.6. Մոդերացնել լրատվամիջոցի սոցանցային էջերի մեկնաբանությունների հրապարակումը՝ հնարավորինս հեռացնելով ատելության խոսք, բռնություն և օրենքով արգելված այլ գործողություններ քարոզող, ակնհայտ վիրավորանք պարունակող գրառումներ:
4.2. Երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար:
6.3. Ընդունել սեփական սխալները և պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽՆԴԻՐԸ

Լալա ՄՆացականյանի դիմումը քննարկելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել անդրադառնալ այն հարցին, թե հարցազրույցի կողմերը՝ լրագրողը և հարցազրույց տվող անձը, ունե՞ն հեղինակային իրավունք հարցազրույցի նկատմամբ, և ինչպե՞ս է այս իրավունքն իրացվում գործնականում:

Խնդիրն ազատ արտահայտվելու և հեղինակային իրավունքի տիրույթում է: Սրանք մրցակցող իրավունքներ են, մասնագետների ձևակերպմամբ՝ հարցազրույցի նկատմամբ հեղինակային իրավունքը հեղինակային իրավունքի մշուշոտ հատվածն է: Չկա հստակ և աներկբա պատասխան, լրագրողների համար դժվար է վիճարկել հայտնի կամ հարուստ հայցվորների պնդումները:

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝
1. Հարցազրույցի նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է հարցազրույց տվող և հարցազրույց անցկացնող անձանց՝ որպես համահեղինակների, եթե նրանց միջև չկա այլ պայմանավորվածություն:
2. Հարցազրույցի հրապարակումը թույլատրվում է հարցազրույց տվող և հարցազրույց անցկացնող անձանց համաձայնությամբ:

Այս դրույթից բխում է, որ հարցազրույց տվող անձը համարվում է հարցազրույցի համահեղինակ, ինչը ենթադրում է, որ լրագրողը չի կարող նյութը հրապարակել, եթե չունի հարցազրույց տվող անձի

համաձայնությունը: Հարցազրույց տվող անձը կարող է պնդել, որ չի ցանկանում հարցազրույցի հրապարակում, լրագրողը պետք է հարգի համահեղինակի խնդրանքը:

Օրենքի տրամաբանությունն այն է, որ հարցազրույց տվող անձը նույնպես ստեղծագործական ջանք է գործադրում իր մտքերը ճիշտ, յուրօրինակ ու հասկանալի կերպով ներկայացնելու և լրագրողի հարցերին պատշաճ պատասխանելու համար: Ի դեպ, համահեղինակությունը սահմանելիս օրենքը նշում է, որ համահեղինակներից յուրաքանչյուրն իրավունք ունի ստեղծագործության՝ իր ստեղծած ինքնուրույն նշանակություն ունեցող մասն օգտագործել իր հայեցողությամբ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:

Մյուս կողմից նաև պետք է նկատի ունենալ, որ հեղինակային իրավունքի օբյեկտ համարվում է ոչ թե գաղափարը, այլ այն արտահայտելու յուրօրինակ ձևը: Այսինքն, եթե լրագրողը փոխել է գաղափարի արտահայտման ձևը, այն ներկայացրել իր ուրույն արտահայտչամիջոցներով, ոչ թե ուղղակի և անփոփոխ մեջբերել է հարցազրույց տվող անձի խոսքերը, այլ դրանք մշակել, փոփոխել և ներկայացրել է իր խոսքերով և իր ուրույն ոճով, ուստի այս դեպքում կարող է վիճելի դառնալ մյուս կողմի՝ համահեղինակ լինելու հանգամանքը: Անձը պետք է իր խոսքն արտահայտելիս բավարար ստեղծագործական ջանք դրսևորի համահեղինակ համարվելու համար: Եթե նրա պատասխանները հիմնականում «այո» կամ «ոչ» են և չեն արտահայտում սեփական վերլուծություն, յուրօրինակ դիտարկումներ, ուստի կարող է վիճելի համարվել նրա՝ համահեղինակ լինելու հանգամանքը:

ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

«Երրորդ անձի պատասխանատվության» խնդրին Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն անդրադարձել է «Դելֆին ընդդեմ Էստոնիայի» և ավելի ուշ կայացրած «MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն ընդդեմ Հունգարիայի» վճիռներում: Երկու վճիռների համեմատական վերլուծությունը կատարվել է նաև Տեղեկատվական վեճերի խորհրդի 50-րդ կարծիքում:

Այդ վճիռներում արտահայտված հիմնական իրավական դիրքորոշումն այն է, որ ԶԼՄ-ները պատասխանատվություն են կրում իրենց էջերում հրապարակված երրորդ անձանց մեկնաբանությունների համար, եթե դրանք խոսքի անօրինական տեսակներ են (օրինակ՝ ատելության խոսք, վիրավորանք, զրպարտություն, վուլգար խոսք և այլն), և եթե լրատվամիջոցը տեղյակ է եղել նման մեկնաբանությունների առկայության մասին, սակայն չի հեռացրել դրանք: Ընդ որում, «տեղյակ» լինելը *a priori* որոշվում է նաև այն հանգամանքի հիմքով, թե լրատվամիջոցը վերահսկո՞ւմ է տվյալ հարթակը:

«Հրապարակ» կայքի խմբագրության դիրքորոշումը, որ *«այդ մեկնաբանությունները մեր տնօրինությունից դուրս են, և դրանց վրա*

կենտրոնանալու դեպքում առհասարակ որևէ նյութ չպետք է հրապարակվի ոչ սոցցանցերում, ոչ լրատվամիջոցներում», հակասում է նշված վճիռներով սահմանված իրավական կարգավորումներին՝ առավել ևս՝ էթիկական սկզբունքներին: Նախ՝ երկիմաստ է, թե ինչ նկատի ունի լրատվամիջոցը, նշելով, որ *«մեկնաբանությունները մեր տնօրինությունից դուրս են»*: Նույնիսկ եթե նկատի է ունեցել, որ լրատվամիջոցը չունի մեկնաբանություններն անմիջապես հեռացնելու կամ արգելափակելու տեխնիկական հնարավորություն, այդուհանդերձ, դրանք հեռացնելու պարտականությունը ծագում է այն պահին, երբ լրատվամիջոցը որևէ եղանակով տեղեկացել է, իրազեկվել է մեկնաբանությունների առկայության մասին: Հենց դա է նկատի ունեցել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերը նշված վճիռներում ու հատկապես երկրորդ վճռում՝ նշելով, որ «ծանուցել ու հեռացնել» համակարգը կարող է նման դեպքերի (այլոց անօրինական մեկնաբանությունների) համար պատշաճ գործիք լինել՝ տարբեր կողմերի իրավունքներն ու շահերը փոխհավասարակշռելու համար: Ըստ «ծանուցել ու հեռացնել» համակարգի՝ լրատվամիջոցի առջև ծագում է երրորդ անձանց անօրինական մեկնաբանությունները հեռացնելու պարտականություն այն պահին, երբ լրատվամիջոցը որևէ կերպ իրազեկվել է անօրինական նյութի առկայության մասին: Դա կարող է տեղի ունենալ անձի նամակով, էլեկտրոնային որևէ ավտոմատ համակարգով լրատվամիջոցին ծանուցելու, իրազեկելու եղանակով, կամ երբ հանգամանքները վկայում են, որ լրատվամիջոցը տեղյակ է եղել կամ չէր կարող տեղյալ չլինել անօրինական խոսքի առկայության մասին:

ՄԻԵԴ վճիռների կարևորությունն այն է, որ դրանցով ՄԻԵԴ-ը անօրինական նյութը հեռացնելու պարտականությունից խուսանավելու որևէ «տեղ» չթողեց լրատվամիջոցներին, որոնք ստիպված եղան իրականացնել իրենց էջերի մոդերացիա՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ: Նման տեխնոլոգիաների բացակայության պարագայում անօրինական մեկնաբանությունների առկայության մասին որևէ անձից ստացած ծանուցումը սովորական եղանակով (օրինակ՝ հեռախոսով, նամակով, բանավոր կերպով, sms-ով, հեռակապով և այլն) առաջացնում է նյութը հեռացնելու վերաբերյալ նույն իրավական պարտականությունը:

Գ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

- «Հրապարակ» կայքի խմբագրությունը Լալա Մնացականյանին հղած պատասխան նամակում հեգնական տոնով է խոսում նրա հետ, ինչն անընդունելի է լրագրողական էթիկայի տեսանկյունից: Էթիկայի կանոնագրի 6.2 և 6.4 դրույթները սահմանում են, որ լրատվամիջոցը պետք է պատրաստ լինի հանդիպել այն անձանց հետ, որոնք վիրավորված են իրենց առնչվող հրապարակումից, և որ լրատվամիջոցը պետք է հանրությանն ուղղորդի իր քննադատական վերաբերմունքն արտահայտել ԶԼՄ-ների նկատմամբ:
- «Հրապարակ» կայքը՝ համաձայն Կանոնագրի 3.5.6 և 3.5.7 կետերի, Լալա Մնացականյանի հասցեին գրված ոչ նորմատիվ խոսքը պետք է անմիջապես հեռացներ հրապարակման արձագանքների բաժնից և դա ժամանակին չանելու համար

գրավոր հայցեր Լալա Մնացականյանի ներողամտությունը։

- Որպես լրագրող ներկայացած անձի հետ ինքնակամ զրուցող մարդն ավելի շուտ համաձայն է, որ իր հայտնած մտքերը հրապարակվեն։ Այսուամենայնիվ, Դիտորդ մարմինը հանրային կամ հասարակական գործիչներին, հայտնի անձանց հիշեցնում է, որ կարող են ձայնագրել լրագրողի հետ իրենց երկխոսությունը՝ հետագա թյուրընկալումներից կամ սխալ մեջբերումներից խուսափելու նպատակով։
- «Հրապարակ» կայքը պատշաճ կերպով չի ստացել Լալա Մնացականյանի համաձայնությունը՝ հարցազրույց տալու վերաբերյալ, մինչդեռ Կանոնագրի 2.5 կետը սահմանում է. «Չչարաշահել լրագրողների և լրատվամիջոցների հետ շփման բավարար փորձ չունեցող անձանց դյուրահավատությունը»։
- Խնդրո առարկա հրապարակումը ժուռնալիստիկայի կանոններով, դասական և ժանրային առումով հարցազրույց չէ, թեև տեխնիկապես հարցուպատասխան է, հետևաբար, բողոքող կողմի՝ նյութի համահեղինակ լինելու հանգամանքը ԴՄ-ն տվյալ դեպքում չի ճանաչում։
- Հրապարակումը կայքից հեռացնելու վերաբերյալ Լալա Մնացականյանի պահանջն անհիմն է։
- Դիտորդ մարմինը «Հրապարակ» կայքի խմբագրությանը հորդորում է՝ որպես բարի կամքի դրսևորում՝ կառուցողական երկխոսություն վարել Լալա Մնացականյանի հետ, փնտրել և գտնել նշված խախտումները վերացնելու արդյունավետ ուղիներ։

Ծանուցում.

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգի 4.13 դրույթը սահմանում է. *«Նախաձեռնության անդամ չհանդիսացող ԶԼՄ-ների հրապարակումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել տվյալ լրատվամիջոցի համաձայնության դեպքում: Այսուհանդերձ, տվյալ ԶԼՄ-ի համաձայնության բացակայության դեպքում ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում ներկայացնել փորձագիտական կարծիք հրապարակման վերաբերյալ՝ տարածելով այն իրեն հասանելի միջոցներով»:*

Ընդունվել է 2023 թ. հուլիսի 20-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, ռեժիսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի պրոֆեսոր
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Նյումեգ» հրատարակչության

գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ, Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի Մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 76-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում: